# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

14.01.2019թ.-ին Արմաշ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Հ.Ջլկնայանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Ա. Շահնազարյանը: Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, դպրոցի տնօրենը, համայնքի բնակիչներ:

Լսեցին՝ Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավար՝ Հ.Ջլկնայանի հաշվետվությունը՝ 2018 թ. 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2018թ. 2-րդ կիսամյակի ընթացքում Արմաշ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 128 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

2018թ. 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ 1777.4 հազ.դրամ

բ/գույքահարկ 6494.2 հազ.դրամ

գ/տեղական տուրք 407.3 հազ.դրամ

դ/հողի վարձավճար 1893.5 հազ.դրամ

ե/տեղական վճար 2056.6 հազ.դրամ

զ/տեղական վճար /աղբահանություն/ 1056.7 դրամ

է/ ծնողական գումար 1421.5 դրամ

Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

ա/Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին տրվել է ֆինանսական աջակցություն

բ/Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է նախատեսված ֆինանսավորումը:

գ/ 1-ին դասարան գնացողներին բաժանվել է պայուսակներ և գրենական պիտույքներ /3520.0 հազ. դրամ/

դ/ Կազմակերպվել է Ամանորյա միջոցառում դպրոցի 1-4-րդ դասարանների և մանկապարտեզի 90 երեխաներին բաժանվել է Ամանորյա տոպրակներ /420.0 հազ. դրամ/:

ե/Կատարվել է ասֆալտապատման աշխատանքներ Անկախության փողոցի 270մ 9600.0 հազ. դրամ /

զ/ Կատարվել է փողոցային լուսավորության աշխատանքներ Անկախության փողոցի 1360.0 հազ. դրամ/:

է/Կառուցվել է ,, Գառնի,, խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբար 17200 հազ. դրամ, որից 15480.0հազ. դրամը ներգրավված միջոցներ / սուբվենցիա / և 1720.0 հազ. դրամը համայնքային միջոցներ, որպես համանեդրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ